

ԸՇ ԳԱԱ-ում քննարկվեցին գյուղատնտեսության ոլորտում գենոմային տեխնոլոգիաների կիրառման հեռանկարները



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Գենոմային տեխնոլոգիաների դերը՝ որպես ժամանակակից ագրոարդյունաբերությունն առաջ մղող ուժ» թեմայով կլոր սեղան՝ նվիրված գենոմային տեխնոլոգիաների կիրառմանը գյուղատնտեսության ոլորտում՝ որպես բիզնեսի զարգացման գործիք: Միջոցառումը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը և ԱՄՆ-ում գործող գեների հաջորդականության «Illumina» ընկերության ռուսաստանյան ներկայացուցչությունը:

«Illumina» ընկերությունը մշակում և արտադրում է սարքավորումներ, ռեագենտներ և ապահովում է գենոմային տվյալների պահպանման ու վերլուծության կենսահնթորմատիկական լուծումներ կենսաբժշկության, կենսատեխնոլոգիաների, դեղագործության և գյուղատնտեսության ոլորտներում: Ընկերության մասնաբաժինը բարձր արդյունավետ սեքվենստորների և կենսաչիպերի արտադրության շուկայում կազմում է 95%:

Ուղչունելով ներկաներին՝ ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը նշեց. «Հայաստանում, որ գենոմային տեխնոլոգիաներն արդեն իսկ բավականին տարածված են Հայաստանում, մեր գիտնականները հետաքրքրված են նորագույն

տեխնիկական հնարավորությունների ներդրմամբ: Ագրոգենոմիկայի զարգացումն առաջին հերթին պետք է հիմնվի Հայաստանի բնության յուրահատուկ կենսաբազմազանության վրա, որը հետաքրքրություն է ներկայացնում աշխարհի տասնյակ երկրների բնագետների համար: Միաժամանակ գենոմային տեխնոլոգիաների ներդրումն անկասկած կնպաստի հազարամյակների ընթացքում ձևավորված յուրահատուկ գենոմային համալիրների կիրառմանը միջազգային հետաքրքրություն ներկայացնող սելեկցիոն աշխատանքներում»:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը համոզեց եկավ «Գենոմիկա և կենսահնթորմատիկա. մեծ տվյալներից դեպի հիմնարար գիտելիքներ և նորարարական մշակումներ» գիտական զեկույցով: Նա ցույց տվեց կենսահնթորմատիկայի ոլորտում Հայաստանի գիտնականների ձեռքբերումները և ներկայացրեց այն հնարավորությունները, որոնք կընձեռի նորագույն սարքավորումների կիրառումը: «Աշխարհում կտրուկ զարգանում է ագրոգենոմիկայի բնագավառը: Այն լայն հնարավորություններ կստեղծի և՛ հիմնարար գիտության համար, և՛ գյուղատնտեսության ու սննդային անվտանգության ոլորտներում աշխատող ընկերությունների բիզնեսի բարելավման համար», - ասաց նա:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի բույսերի գենոմիկայի խմբի ղեկավար Քրիստինե Մարգարյանը ներկայացրեց վերջին տարիներին Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների ուսումնասիրման աշխատանքները և գենոմային նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ձեռք բերված տվյալները: Նշվեց, որ Հայաստանում տեղածին սորտերը և վայրի խաղողն օժտված են կլիմայական փոփոխվող պայմաններում հարմարվողական մեծ ներուժով:

EMEA (Europe, Middle East & Africa) միջազգային հեղինակավոր վարկանիշավորման համակարգի «Գենոտիպավորում» ուղղությամբ ավագ մասնագետ Կասվյե Դավիդն իր գիտական զեկույցման ժամանակ շեշտեց. «Ներկայումս մարդկությունը բախվել է գլոբալ խնդիրների հետ, որոնք աստիճանաբար ավելի են սրվելու: Առաջինը մարդկանց պոպուլյացիայի աճն է, ինչն իր հերթին բերում է սննդամթերքի օգտագործման աճի, մասնավորապես կենդանական սպիտակուցների: Մյուսը գյուղատնտեսական տարածքների կրճատման խնդիրն է: Սա իր հերթին բերում է սննդամթերքի գնաճի: Այս խնդիրների լուծման համար գենոմիկան ունի համապատասխան գործիքներ»:



Ագրոգենոմիկայի մասնագետ Ալինա Չեռնովան ներկայացրեց արտադրական գործընթացներում «Illumina» ընկերության գենոմային տեխնոլոգիաների ներդրման փորձը: Գիտական զեկույցներով համոզեց եկան «Valogene» ընկերության ներկայացուցիչ Կլոտիլդա Պատրիկը, «Genotek» բժշկագենետիկական կենտրոնի զարգացման գծով տնօրեն Արտյոմ Ելմուրատովը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին